

# ԼՂԻՄ-ի ՎԱՐՉԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻԱՎՈՐԻ ԿԱՋՄԱՎՈՐՄԱՆ ՇՈՒՐՁ<sup>1</sup>

## Նույն Սարունյան

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԱրՊՀ

Լեռնային Ղարաբաղը պատմական հանգամանքների բերումով քսաներորդ և ներկա դարաշրջաններում վիճահարույց տարածաշրջան էր հանդիսանում ինչպես նախկին խորհրդային ժամանակաշրջանում, այնպես էլ ներկա անկախ քաղաքական պետական միավորումների ազատ հարաբերությունների պայմաններում:

Արցախը, դարեր ի վեր լինելով Հայաստանի պատմական գավառներից մեկը, ամբողջ պատմության ընթացքում ստիպված էր պաշտպանել գոյության և ինքնատիպության իր իրավունքը:

Ուշ միջնադարում ձևականորեն գտնվելով շահական Պարսկաստանի կազմում՝ Ղարաբաղի մելիքություններն իրենց փաստացի իշխանությունը կարողացան պահպանել նույնիսկ այն ժամանակ, երբ Արևելյան Հայաստանն ամբողջությամբ կորցրել էր երբեմնի անկախության մնացորդները<sup>2</sup>:

Պետականության ավանդույթները երբեք չեն մոռացվել Ղարաբաղի հայերի գիտակցության մեջ, և այդ էր պատճառներից մեկը, որ հետագայում՝ ճգնաժամային պատմական պահերին, Լեռնային Ղարաբաղում անմիջապես ձևավորվել են ժողովրդի ինքնապաշտպանությունը կազմակերպելու և նրա կենսագործունեությունն ապահովելու ընդունակ պետական կառույցներ:

Լեռնային Ղարաբաղի տարածքն անցյալում նույնպես դիտվել է իբրև առանցքային՝ իրենց տիրապետությունը Անդրկովկասում հաստատելու համար պայքար մղող պետությունների կողմից<sup>3</sup>:

Առաջին համաշխարհային պատերազմը սկսվելուց և ռուսական կայսրության փլուզումից, հատկապես 1917 թվականի բոլշևիկյան հեղաշրջումից հետո Լեռնային Ղարաբաղի համար սկսվեց ծանր մի շրջան, որը ողբերգականորեն անդրադարձավ ողջ տարածաշրջանի հետագա ճակատագրի վրա:

1918 թվականը ելակետային դարձավ Ղարաբաղյան հիմնախնդրի պատմության մեջ. Ռուսական կայսրության փլուզմանն ու Կովկասյան

<sup>1</sup> Հոդվածն ընդունված է 21.11.13:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ պատմության ամբիոնը:

<sup>2</sup> С.Лисицян, Армяне Нагорного Карабаха, Ереван, 1992, стр 53.

<sup>3</sup> Ս.Սելջունյան, Լեռնային Ղարաբաղ, Երեւան, 1990, էջ 4:

նազնաճակատի քայքայմանը հետևեց թուրք-գերմանական զինված ներխուժումն Անդրկովկաս:

Հարկ է նշել, որ արդեն այդ ժամանակ մեծ տերություններն ու համաշխարհային հանրությունը՝ ի դեմս Ազգերի լիգայի, վիճելի ճանաչեցին Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը: Իսկ Խորհրդային Ռուսաստանի արտգործոցն Արթուր Չիչերինը Ղարաբաղի մասին վաղիցից Լեռնային հարցմանը պատասխանել էր, որ Ղարաբաղը բուն հայկական տարածք է, և Ղարաբաղի հանձնումն Ադրբեջանին համարել էր իրենց սկզբունքներին հակասող քայլ<sup>1</sup>:

Առաջին աշխարհամարտի դադարեցման նպատակով մղվող կռիվներից և Թուրքիայում ցեղասպանության հետևանքներից քայքայված Հայաստանը համաձայնեց վիճելի ճանաչել Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը և տարածքային վեճերի լուծումը թողնել միջազգային հանրությանը՝ Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման անկապտելի իրավունքը հաշվի առնելու պայմանով:

Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի վիճելի լինելը ճանաչվել է նաև 1919-20 թվականներին Փարիզի խաղաղության վեհաժողովի, արդեն Խորհրդային դարձած Ռուսաստանի, ինչպես նաև Ադրբեջանի կողմից:

1920 թվականի դեկտեմբերին Հայաստանի Խորհրդայնացումից հետո, նորաստեղծ Ադրբեջանական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության իշխանությունները հռչակեցին վիճելի տարածքների նկատմամբ ունեցած իրենց հավակնություններից հրաժարվելու մասին և պաշտոնապես ճանաչեցին Լեռնային Ղարաբաղի ժողովրդի «ազատ և լիակատար ինքնորոշման» իրավունքը: Սակայն հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ այդ քայլն ընդամենը բոլշևիկների իշխանության հաստատումից հետո Ադրբեջանի ղեկավարների մարտավարական խորամանկությունն էր<sup>2</sup>:

Ռուսաստանի բոլշևիկները Հայաստանը Խորհրդայնացնելուց հետո յուրօրինակ ձևով որոշեցին Լեռնային Ղարաբաղի հետագա ճակատագիրը: «Պրուլետարական հեղափոխությունը» մահմեդական Արևելքում տարածելու գաղափարով տոգորված նոր իշխանությունը 1921թ. հուլիսի 5-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովբյուրոյի պլենումի ապօրինի որոշմամբ<sup>3</sup> Լեռնային հայկական Ղարաբաղը, որը պատմական Հայաստանի Արցախ նահանգի վարչատարածքային միավորի լեռնային մասն էր կազմում,

<sup>1</sup> P. Казанджанян, К предыстории самоопределения Нагорного Карабаха, Москва, 1997, стр. 29.

<sup>2</sup> Կ. Քալայան, Ղարաբաղյան հիմնահարցը և միջազգային դիվանագիտությունը 1991-1994 թթ.,

գիտական թեզ, Երևան, 2002թ., էջ 12:

<sup>3</sup> ՀՀ ՀՔԿՓԿՊԱ, ֆ. 1, ց. 1, գ. 30, ք. 5: Տես՝ Գ. Արրահամյան, Արցախյան գոյամարտ, Երևան, 1991, էջ 57, Нагорный Карабах, Историческая справка, Ереван, 1988, стр. 33.

բռնակցվեց նորահաստատ Խորհրդային Ադրբեջանին՝ «լայն ինքնավարության իրավունքներով և Շուշի մայրաքաղաքով»<sup>1</sup>:

Ադրբեջանի Կ(Բ)Կ Կենտկոմը 1923 թ. հուլիսի սկզբներին ստեղծեց կուսակցության Լեռնային Ղարաբաղի մարզային կոմիտեի ժամանակավոր նախագահություն հետևյալ կազմով՝ Սերո Մանուցյան(մարզկոմի քարտուղար), Արմենակ Ղարաբոյան (Կարակոզով), Բաշիր Բինյաթով, Միխայիլ Չալյան և Մուկուչ Արզանյան<sup>2</sup>:

Իսկ 1923 թվականի հուլիսի 7-ին Ադրբեջանի ԿԳԿ-ի հռչակագրով «Լեռնային Ղարաբաղի հայկական մասում»<sup>3</sup> կազմավորվեց ինքնավար մարզ: Հռչակագրում նշվում էր, որ Ադրբեջանի Կենտրոնական Գործադիր կոմիտեն որոշում է. «1. Ղարաբաղի հայկական մասում կազմակերպել ինքնավար մարզ՝ Խանքենդի կենտրոնով: 2. Ինքնավար մարզի վարչական օրգաններն են մարզային գործադիր կոմիտեն և տեղական խորհուրդները: 3. Մինչև մարզային գործադիր կոմիտեի կազմակերպումը ստեղծել ժամանակավոր հեղափոխական կոմիտե... 4. Մարզգործկոմի ֆինանսական և տեխնիկական անհրաժեշտ միջոցները տրվում են Ադրբեջանական ԽՍՀ ընդհանուր միջոցներից՝ Անդրկենտգործկոմի անմիջական կարգադրությամբ: 5. Մարզի կանոնադրությունը մշակելու, Ղարաբաղի ինքնավար մարզին անցնող վարչական միավորները փաստորեն հանձնելու, ինչպես և ինքնավար մարզի սահմանները որոշելու համար ստեղծել խառն հանձնաժողով՝ Լեռնային Ղարաբաղի, դաշտային Ղարաբաղի, Քրդստանի և Ադրբեջանական ԽՍՀ կենտրոնական իշխանության ներկայացուցիչներից, որին հանձնարարել ավարտել իր աշխատանքը մինչև օգոստոսի 15-ը: Ադրկենտգործկոմի փոխնախագահ՝ Մ.Բ.Կասումով: Ադրկենտգործկոմի քարտուղար՝ Մ.Խանբուդաղով»<sup>4</sup>:

Հռչակագրով նշված ժամկետում՝ 1923 թ. օգոստոսի 15-ին, առաջադրված խառն հանձնաժողովը, որի կազմի մեջ մտնում էին «նախագահ Ադրբեջանի ռազմածովային ժողկոմ Կարակը, անդամներ Կարակոզովը, Սվիրիդովը, Իլդրընը և Բունիաթգադեն»<sup>5</sup>, ավարտեց Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի տերիտորիայի որոշումը: Նա բռնում էր Փոքր Կովկասի արևելյան ելուստը և դաշտային Ղարաբաղի մի մասը՝ 4.387 քառ.կիլոմետր ընդհանուր տարածությամբ: ԼԴԽ-ի սահմաններն էին՝

<sup>1</sup> Нагорный Карабах в 1918-1923 гг., Сборник материалов и документов, Ереван, 1992г., стр 0.

<sup>2</sup> Գ.Հովհաննիսյան, Սովետական իշխանության հաստատումը Լեռնային Ղարաբաղում, Երևան, 1971, էջ 231:

<sup>3</sup> Бакинский рабочий, N 151, 9 июля 1923.

<sup>4</sup> Правда о Нагорном Карабахе, Степанакерт, 1989, стр.56-57.

<sup>5</sup> Բ.Ուլուբաբյան, Արցախյան գոյապայքարը, Երևան, 1994, էջ 158:

արևելքից՝ Աղդամի շրջանը, արևմուտքից՝ Լաչինի(Քաշաթաղի) և Քյալբաջարի(Քարվաճառ) շրջանները, հարավից՝ Կարյազինոյի(Ֆիզուլի) շրջանը, հյուսիսից՝ նախկին Գյուլիստանի(Շահումյանի) և Կասումիսմայիլովի շրջանները: Սարգը ընդգրկում էր Շուշի քաղաքը, Խանքենդի ավանը (Վարարակն) և 248 գյուղեր և գյուղակներ: 1926 թվականի դեկտեմբերյան մարդահամարի տվյալներով՝ մարզերում ապրում էին 125.159 մարդ, որից 116.934 հոգի գյուղերում, իսկ 8.225 հոգի՝ քաղաքում<sup>1</sup>:

Լեռնային Ղարաբաղի մնացած մասը՝ պատմական Գյուլիստանը, վերափոխված Շահումյանի շրջանը և Հյուսիսային Արցախը՝ ներկայիս Խանլարի (Գյանջա քաղաքի հետ միասին), Ղաշքեսանի, Գետաբեկի, Շամխորի և մի շարք այլ շրջանների լեռնային և նախալեռնային մասերը՝ որպես վարչական առանձին շրջաններ, ևս մտցվեցին Ադրբեջանական ԽՍՀ կազմի մեջ:

Այսպիսով՝ հայկական բնակչության ճնշող մեծամասնության կամքին հակառակ Լեռնային Ղարաբաղը ոչ միայն հանձնվեց Ադրբեջանին, այլև արհեստականորեն մասնատվեց վարչատարածքային առանձին միավորների՝ բնական կերպով հաստատված տարածքային և ազգային-պետական միասնությունից նրան զրկելու և սահմաններն անորոշ դարձնելու նպատակով:

1923 թվականին երկրամասի տարածքում կազմավորվեց Ինքնավար Մարզ Լեռնային Ղարաբաղում: 1923 թվականի հուլիսի 24-ին Ադրբեջանի Կենտգործկոմի նոր հռչակագրով վերացվեց Ղարաբաղի գործերի գծով կոմիտեն և փոխարենը ստեղծվեց Ինքնավար Մարզի ժամանակավոր հեղափոխական կոմիտե (նախագահ՝ Արմենակ Ղարաբյոզյան), որը լուծարվեց նույն թվականի նոյեմբերի 9-ին՝ մարզային խորհրդի առաջին համագումարն ավարտվելուց հետո<sup>2</sup>:

1923թ. օգոստոսին ԻՄԼՂ-ի տարածքում կազմակերպվեցին շրջաններ՝ Ջրաբերդի (կենտրոնը՝ գյուղ Մարդակերտ), Խաչենի (կենտրոն՝ գյուղ Խանքենդի), Վարանդայի (կենտրոն՝ գյուղ ճարտար), Դիզակի (կենտրոն՝ գյուղ Հադրուք) և Շուշին՝ քաղաքի իրավունքով: 1924թվականին կազմավորվեց Շուշիի շրջանը (կենտրոն՝ քաղաք Շուշի)<sup>3</sup>:

ԻՄԼՂ-ի կազմի մեջ չմտցվեց Արցախ-Ղարաբաղի լեռնային մասի զգալի հատվածը: Դուրս է թողնվում Խամսայի մելիքություններից Գյուլիստանի

<sup>1</sup> Գ.Սեյրան, Ղարաբաղի տնտեսական կյանքը և նրա հեռանկարները, Թիֆլիս, 1928, էջ 71: Տես՝

Գ.Հովհաննիսյան, Սովետական իշխանության հաստատումը Լեռնային Ղարաբաղում, Երևան, 1971, էջ 223:

<sup>2</sup> «Խորհրդային Ղարաբաղ», 24 հուլիսի, 1924:

<sup>3</sup> ԼՂՀ պետարխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 14, թ. 7:

մելիքության ամբողջ տարածքը՝ Շահումյանի շրջանն ու Խանլարի շրջանի մեծ մասը, ինչպես նաև Դիզակի մելիքության զգալի մասը:

Այսինքն՝ Ադրբեջանական ԽՍՀ, խախտելով Կովբյուրոյի «Լեռնային Ղարաբաղի հայկական հատվածից ստեղծել ինքնավար մարզ...» որոշումը, մարզի կազմում չի ներառել ԼՂ հարավային (Կուրաթլու, Ջանգելան, Ֆիզուլի, Ջաբրայիլ), արևմտյան (Լաչին, Քելբաջար), կենտրոնական (Խանլար, Շահումյան) և հյուսիսային (Դաշքեսան, Գետաբեկ, Շամխոր) շրջանները, որտեղ հայերը կազմում էին բնակչության մեծամասնությունը<sup>1</sup>:

Բացի դրանից՝ կանխամտածված կերպով ԼՂԻՄ-ի իրենց կազմած տարածքը արհեստականորեն, նեղ շերտով՝ 5 կիլոմետր երկարությամբ, կտրում են Հայկական ԽՍՀ-ի հետ ընդհանուր սահման ունենալու հնարավորությունից: Լեռնային Ղարաբաղի և Հայկական ԽՍՀ-ի միջև եղած արցախյան հայկական տարածություններում ստեղծում են Լաչինի, Քյալբաջարի, Ջանգելանի շրջանները, որտեղի հայ բնակչությունը տարբեր պատճառներով ստիպված է լինում հեռանալ (Արցախի արևմտյան հատվածում նրա երկու շրջաններից՝ Քյալբաջար և Լաչին, ստեղծվել է «Կարմիր Քրդստանը», որը գոյատևել է մինչև 1936 թվականը)<sup>2</sup>:

Այսպիսով՝ ԻՄԼԴ-ը, որն ընդգրկում էր Արցախի տարածքի մի փոքր հատվածը, չորս կողմից շրջափակվում է Ադրբեջանի կազմի մեջ մտցված վարչական շրջաններով և մեկուսացվում Հայկական ԽՍՀ-ից:

1936 թվականին «Ինքնավար Մարզ Լեռնային Ղարաբաղում» վարչական միավորը վերանվանվեց «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ»-ի՝ հինգ վարչական շրջաններով, երկու քաղաքով և յոթ քաղաքատիպ ավանով<sup>3</sup>:

Ստեփանակերտի (1978 թվականից՝ Ասկերանի) շրջանն ընդգրկում էր 48 բնակավայր(գյուղ), Հադրուքինը՝ 41, Մարտակերտինը՝ 61, Մարտունունը՝ 40, Շուշիինը՝ 30<sup>4</sup>:

1986 թվականին Ադրբեջանական ԽՍՀ-ի կողմից ընդունված «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի մասին» ԼՂԻՄ-ի պետականության բնորոշ հատկանիշները ԽՍՀՄ ազգային-պետական կառուցվածքի համակարգում արտացոլող օրենքում հաստատագրված է, որ ԼՂԻՄ-ի կարգավիճակը որոշվում է ԽՍՀՄ սահմանադրությամբ և «Ինքնավար Մարզի տարածքը չի կարող փոփոխության ենթարկվել առանց ԼՂԻՄ-ի ժողպատգամավորների խորհրդի համաձայնության» (հոդված 3):

<sup>1</sup> Ղարաբաղյան ազատագրական պատերազմ, 1988-1994, Հանրագիտարան մեկ հատորով, Հայկական հանրագիտարանի հրատարակչություն, Երևան, 2004, էջ 225:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 237:

<sup>3</sup> ՀՄՀ, հ.4, Երևան, 1978, էջ 578:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 582:

Ադրբեջանական իշխանությունների կողմից Լեռնային Ղարաբաղի նկատմամբ տարածքային սահմանափակումների մեկուսացումը ՀԽՍՀ-ից մարզի հայ բնակչությանը ստիպեցին պայքարել տարածաշրջանը Ադրբեջանի կազմից դուրս բերման համար: Շրջադարձային էր 1988 թվականին ծավալված արցախյան ազատագրական շարժումը, որի արդյունքում 1991 թ. սեպտեմբերի 2-ին ԼՂԻՄ-ի և Շահումյանի շրջանի միավորմամբ հռչակվեց Լեռնային Ղարաբաղի անկախությունը:

Չնայած 1992թ. հունվարի 7-ին Ադրբեջանական ԽՍՀ ընդունել է «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը լուծարելու մասին» օրենքը (Բաքվի կողմից թվագրված է 23.11.1991)<sup>1</sup>, սակայն օրենքը հակաիրավական է, քանի որ Ադրբեջանի Հանրապետությունը չի դարձել Ադրբեջանական ԽՍՀ-ի իրավահաջորդը և որևէ առնչություն չունի Լեռնային Ղարաբաղի հետ:

Արդեն 1992 թ. մայիսի 9-ին ԼՂՀ ՊԲ կողմից Շուշիի ազատագրումը, բեկում մտցնելով արցախյան ազատագրական պատերազմի մեջ, հաստատագրեց Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության իրավունքները պատմական հայրենական հողի վրա:

**К вопросу об образовании административно-политической единицы НКАО.**

Нуне Сарумян

**Резюме**

В статье отмечается, что арцахский народ всегда боролся за независимость. В ходе этой борьбы существенное значение имели образование АОНК в 1923 году и НКАО. Говорится об административно-территориальных образованиях на территории НКАО и провозглашению НКР.

**On the Question of the Formation of NKAR**

Nune Sarumyan

**Summary**

The article deals with the problem of Artsakh people, who fought for their independence. The main place was given to the name of AR of NK in 1923 which was renamed into NKAR. About administrative-territorial foundations on the territory of NKAR and proclamation of the NKR was also spoken in the given article.

<sup>1</sup> Ղարաբաղյան ազատագրական պատերազմ, 1988-1994, Երևան, 2004, էջ 225: